Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 4

Ք. Երևան, 13 օգոստոսի 2020 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) էլեկտրոնային քվեարկության ներկայացված հարցերի վերաբերյալ

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցել են՝

Տ. Խաչատրյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)

Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)

Մ. Սանդոյան - <<ՓՄՁ համագործակցության ասոցիացիա>> ՀԿ կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

1. **Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի առաջին կիսամյակի հաշվետվության նախագիծը**

Ա. Առաքելյանն առաջարկեց պարզաբանել, թե ինչքանով է բարձրացել սահմանային վերահսկողության գործընթացի արագությունն ու թափանցիկությունը «Մեկ պատուհան» համակարգի գործարկումից հետո և ներկայացնել քանակական ցուցանիշներ, ինչպես է վերահսկվում մասնավոր լաբորատորիաների կողմից

իրականացվող փորձաքննությունների արդյունքների որակը և հավաստիությունը, ինչքանով է «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքը տարածվում սննդի անվտանգության բնագավառում փորձարկումներ իրականացնող լաբորատորիաների վրա, և եթե տարածվում է, ինչպես է վերահսկվում օրենքի դրույթների կատարումը:

Հաշվետվությունում նշված էլեկտրոնային փոստի այն հասցեները, որոնք գրանցված են հանրային տիրույթում, առաջարկեց տեղափոխել պետական մարմինների տիրույթ, ինչպես նաև ավելացնել տեղեկություններ ՀՀ ԳԱԱ կազմակերպությունների հետ համագործակցության վերաբերյալ:

Մ. Բեգլարյանն առաջարկեց 2020 թվականի առաջին կիսամյակի հաշվետվության «Սննդամթերքի անվտանգություն» բաժնում ավելացնել «2020թ. առաջին կիսամյակում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝» բառերը, այնուհետև նշել կատարված աշխատանքները: Առաջարկեց նաև խմբագրել նույն բաժնի առաջին պարբերությունը՝ պահպանելով հաջորդիվ ներկայացված պարբերությունների շարադրման ձևաչափը:

Հաշվետվության նույն բաժնի «Ստուգումներ, դրանց քանակը, բնութագրերը, տևողությունը և անցկացված ստուգումների արդյունքները» հատվածում առաջարկեց նշել նաև չափելի ցուցանիշ, որը ցույց կտա, թե սննդամթերքի անվտանգության ոլորտում բարձր, միջին և ցածր ռիսկային խմբերում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների մոտ նախատեսված տեսչական ստուգումների քանի տոկոսն է իրականացվել, նաև նշել, թե սննդարդյունաբերության որ ոլորտում են այդ ստուգումներն անցկացվել:

Առաջարկությունների հիման վրա կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որից հետո փաստաթղթի լրամշակված տարբերակը ներկայացվել է Խորհրդի անդամներին՝ էլեկտրոնային քվեարկության նպատակով:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 8 կողմ ձայներով որոշվեց.

1. *Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի առաջին կիսամյակի հաշվետվության նախագծին:*

2. **Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման գործունեության 2020 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին որոշման նախագիծը**

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 8 կողմ ձայներով որոշվեց.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման գործունեության 2020 թվականի տարեկան ծրագիրը:

3. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի բյուջեում ներքին հոդվածային վերաբաշխում կատարելու վերաբերյալ

Ա. Առաքելյանն առաջարկեց պարզաբանել, թե ինչպես է հաշվարկվել Ձև N1-ի 65 դրամ և այլ ձևերի արժեքները:

Տեսչական մարմնի կողմից ներկայացվել է պարզաբանում, ըստ որի՝ յուրաքանչյուր տարի ձևաթղթերը ձեռք են բերվում գնումների ընթացակարգով, շուկայում գործող նույն սակագնով:

Մ. Բեգլարյանը ձևաթղթերի թվարկման ժամանակ 2-րդ էջի 1-ին տողում «Մեղր Չինաստան» բառերից բացի առաջարկեց նշել նաև անհրաժեշտ ձևաթղթի անվանումը:

Առաջարկությունների հիման վրա կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որից հետո փաստաթղթի լրամշակված տարբերակը ներկայացվել է Խորհրդի անդամներին՝ էլեկտրոնային քվեարկության նպատակով:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 8 կողմ ձայներով որոշվեց.

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի բյուջեում ներքին հոդվածային վերաբաշխում կատարելու վերաբերյալ առաջարկին:

4. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին հանրությունից ստացվող բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու կարգը սահմանելու մասին

Մ. Բեգլարյանն առաջարկեց փաստաթղթի հավելվածի ընդհանուր դրույթների 5-րդ կետի 1-ին նախադասության սկզբում ավելացնել «բողոքողի» բառը:

Առաջարկությունների հիման վրա կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որից հետո փաստաթղթի լրամշակված տարբերակը ներկայացվել է Խորհրդի անդամներին՝ էլեկտրոնային քվեարկության նպատակով:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների 8 կողմ ձայներով որոշվեց.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին հանրությունից ստացվող բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու կարգը:

5. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդաբանությանը հավանություն տալու մասին որոշման նախագիծը

Մ. Բեգլարյանն առաջարկեց որոշման նախագծի «1. Նպատակի չափորոշիչներ»-ի 1.2) կետում C ցուցանիշի հաշվարկման բանաձևը ներկայացնել մինչ «որտեղ» բառը նշելը: «2. Գործընթացի չափորոշիչներ»-ում «2.1) ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը» և «2.2) բարձր ռիսկային տնտեսվարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ» չափորոշիչները բանաձևում նշանակված են միևնույն տառով՝ R: Նա առաջարկեց օգտագործել տարբեր տառային արտահայտությամբ նշանակումներ՝ հետագայում ցուցանիշների վերաբերյալ տվյալները չշփոթելու համար, «Նշված հարաբերությունը նշանակենք R-ով և գնահատումը կատարենք հետևյալ բանաձևով՝» նախադասությունը խմբագրել՝ նշելով, որ տվյալ ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով, այնուհետև ներկայացնել համապատասխան բանաձևը: Առաջարկեց նաև ուղղել նախագծում հանդիպող վրիպակները:

Առաջարկությունների հիման վրա կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որից հետո փաստաթղթի լրամշակված տարբերակը ներկայացվել է խորհրդի անդամներին՝ էլեկտրոնային քվեարկության նպատակով:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած խորհրդի անդամների 8 կողմ ձայներով որոշվեց.

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդաբանությունը հաստատելու մասին որոշման նախագծին:

6. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

Ա. Առաքելյանն առաջարկեց սահմանային հսկիչ կետերի քաղաքացիական ծառայության և նմուշառման և լաբորատոր փորձաքննությունների կազմակերպման բաժնի պաշտոնների անձնագրերում կրթություն «Կրթություն, որակավորման

աստիճանը» մասում ավելացնել կենսաբանություն, բժշկական կենսաքիմիա, կենսաքիմիա, կենսատեխնոլոգիա և կենսաճարտարագիտություն ենթաոլորտները:

Պարզաբանվել է, որ ՍԱՏՄ քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի «3.1 Կրթության, որակավորման աստիճանը» կետում կրթությունը սահմանելիս առաջնորդվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1191-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում):

Տեսչական մարմնի սահմանային հսկիչ կետերի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի «3.1 Կրթության, որակավորման աստիճանը» կետում, ի թիվս այլ ուղղությունների, սահմանված է նաև «Բնական գիտություններ, մաթեմատիկա և վիճակագրություն» ուղղությունը, որն իր մեջ արդեն իսկ ներառում է «Կենսաբանական գիտություններ» ոլորտի մեջ ներառվող՝ կենսաբանության ոլորտին առնչվող, որոշմամբ սահմանված բոլոր ենթաոլորտները:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած խորհրդի անդամների 8 կողմ ձայներով որոշվեց.

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկին, ինչպես նաև հետագայում Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հաստիքացուցակում և(կամ) նոր չափանիշներով գնահատված և դասակարգված քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում գնահատման, դասակարգման, դրանցում առկա տեխնիկական և այլ անհրաժեշտ փոփոխությունների կատարմանը:

7. Միջնաժամկետ ծախսային ծրագրի (ՄԺԾԾ) վերաբերյալ

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած խորհրդի անդամների 8 կողմ ձայներով որոշվեց.

1.Հավանություն տալ միջնաժամկետ ծախսային ծրագրին (ՄԺԾԾ):

8. <<Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի մարտի 19-ի N 313-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու մասին

Ա. Ասոյանն առաջարկեց որոշման նախագծի հիմնավորմամբ հստակեցնել առկա պարտավորության առաջացման պատճառները, տեսչական մարմնի գործողությունները՝ ուղղված տնտեսավարողներից համապատասխան գումարների հավաքագրմանը, ինչպես նաև նշել, թե ինչ միջոցներ են ձեռնարկվում հետագայում պարտավորություններ չձևավորելու նպատակով:

Ա. Առաքելյանն առաջարկեց պարզաբանել, թե ինչ հանգամանքներով է պայմանավորված պարտավորության առաջացումը:

Տեսչական մարմնի կողմից Ա. Ասոյանին և Ա. Առաքելյանին ներկայացվել են համապատասխան պարզաբանումներ և հիմնավորումներ:

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցած խորհրդի անդամների 7 կողմ ձայներով որոշվեց.

1.Հավանություն տալ <<Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի մարտի 19-ի N 313-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ, ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ